



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՍԵՖԻԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 22491/08)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2012 թվականի հոկտեմբերի 2

ՎԵՐՋՆԱԿԱՆ

02/01/2013

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



ՍԵՖԻԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Egbert Myjer,

Corneliu Bîrsan,

Alvina Gyulumyan,

Ján Šikuta,

Luis López Guerra,

Nona Tsotsoria, *դատավորներ,*

և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2012թ. սեպտեմբերի 11-ին կայացած դռնփակ նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2007 թվականի մայիսի 11-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Լիբանանի քաղաքացի պրն. Ժիրայր Սեֆիլյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 22491/08 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երևանում գործող փաստաբաններ պրն Վ. Գրիգորյանը և պրն Ա. Զաքարյանը: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Կառավարության ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն պնդել է, մասնավորապես, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում իր կալանքը եղել է ոչ իրավաչափ, դատարանները չեն ներկայացրել երկարատև կալանքը հիմնավորող պատճառներ, ընդհանուր իրավասության դատարանում 2007 թվականի փետրվարի 7-ի վարույթը մրցակցային չի եղել, իրեն զրկել են 2007 թվականի մայիսի 14-ին վերաքննիչ դատարանում կայացած բանավոր լսումների հնարավորությունից և իր հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը եղել է անօրինական և անհամաչափ:

4. 2010 թվականի հունվարի 7-ին գանգատն ուղարկվեց Կառավարությանը: Որոշվեց նաև իրականացնել գործի

ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (Հոդված 29, կետ 1):

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1967 թվականին և ապրում է Երևանում:

6. Դիմումատուն քաղաքացիական հասարակության ակտիվ անդամ է և առաջատար պաշտոններ է զբաղեցնում մի շարք հասարակական կազմակերպություններում, այդ թվում նաև՝ Հայ կամավորների միությունում, «Ազատագրված տարածքների պաշտպանություն»-ում և Արաքս-Կուր բարեգործական հիմնադրամում: Դիմումատուն ծագումով հայ է և ակնհայտորեն մշտական բնակություն է ունեցել Հայաստանում 1992 թվականից ի վեր՝ ունենալով այստեղ ընտանիք և հանդիսանալով բնակարանի սեփականատեր:

Ա. Դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը

7. Դիմումատուն հանդես է գալիս որպես Հայաստանի իշխանություններին քննադատող անձ: Դիմումատուի պնդմամբ՝ այս կապակցությամբ նրան մի քանի անգամ կանչել են Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ), որտեղ նրան կարգադրել են դադարեցնել ընդդիմության հետ իր համագործակցությունը և կառավարության դեմ ուղղված քննադատությունները:

8. ԱԱԾ Սահմանադրական կարգի պահպանության եւ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետը չհստակեցված ամսաթվին միջնորդություն է ներկայացրել դատարան դիմումատուի հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների լսում և ձայնագրություն իրականացնելու նպատակով:

9. 2006 թվականի օգոստոսի 15-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը քննել է միջնորդությունը և հանգել հետևյալին.

«Դատարանին ներկայացված նյութերից և միջնորդությունից ակնհայտ է, որ ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանության եւ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչությունն ունի բավարար հիմքեր ենթադրելու, որ [դիմումատուն], Լիբանանի քաղաքացի, ծնված 1967 թվականին Լիբանանում, Երևան քաղաքի Լեփսիուսի 17-րդ փողոց, բն.42 հասցեում բնակվող «Հայ կամավորների միության»

առաջնորդն իրականացնում է գործունեություն, որն ուղղված է Հայաստանում ներքին քաղաքական իրադրությունն ապակայունացնելուն և քաղաքացիական անհնազանդության մթնոլորտ ստեղծելուն՝ այսպիսով հող նախապատրաստել հակասահմանադրական միջոցներով Հայաստանում կառավարության փոփոխության համար՝ հրապարակային կոչեր անելով»:

10. Ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ բավարարվել է դիմումատուի երեք բջջային և երեք ֆիքսված հեռախոսային ցանցերից ելքագրվող և մուտքագրվող հեռախոսային խոսակցությունները և այլ հաղորդումները վեց ամիս ժամկետով լսելու և ձայնագրելու մասին միջնորդությունը՝ հաշվի առնելով, որ դրանք կարող են պարունակել վերոնշյալ փաստական հանգամանքները հիմնավորող այնպիսի տեղեկություններ, որոնց օգտագործումը դյուրին կդարձնի հանցագործության բացահայտումը և ապացույցների ձեռք բերումը, քանի որ դիմումատուի գործողություններում առկա են եղել Քրեական օրենսգրքի (ՔՕ) 301-րդ հոդվածով սահմանված հանցավոր արարքի տարրեր: Ընդհանուր իրավասության դատարանը հղում է կատարել, մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 281-րդ և 284-րդ հոդվածներին:

Բ. Դիմումատուի դեմ հարուցված քրեական վարույթը և նրան կալանքի տակ պահելը

11. 2006 թվականի դեկտեմբերի 2-ին դիմումատուն ելույթ է ունեցել Հայ կամավորների միության կողմից կազմակերպված հավաքի ժամանակ: Հավաքը կայացել է Երևանի պարարվեստի պետական ուսումնարանի դահլիճում, որին մասնակցել է շուրջ հարյուր հիսուն մարդ: Դիմումատուն կոչ է արել հավաքի մասնակիցներին կազմակերպված լինել, այլապես ոչինչ չէր կարող ստացվել: Բավարար չէր շարունակ կրկնել, որ Նախագահն ու Վարչապետը հրաժարական տան. նրանք երբեք հրաժարական չէին տա: Ո՛չ խաղաղ հավաքները կստիպեին նրանց հրաժարական տալ, ոչ՝ էլ արտաքին ճնշումները: Նա կոչ է արել մասնակիցներին ստեղծել հավաքական մի ուժ, որպեսզի հնարավոր լինի ստիպել իշխանությանը հրաժարական տալ՝ մատնանշելով, որ միակ և հիմնական նպատակը նրանցից ազատվելն էր: Այնուհետև նա շեշտել է, որ նրանք չպետք է թույլ տան իշխանության գլուխ կանգնածներին շատանալ, քանի որ, հակառակ դեպքում, հավաքի մասնակիցների ապագա ծրագրերի համար լուրջ խոչընդոտներ ի հայտ կգան: Դիմումատուն իշխանություններին անվանել է «հրեշներ», որոնք կդառնան է՛լ ավելի վտանգավոր, եթե նրանց թույլ տան շատանալ: Դիմումատուն համակարծիք է եղել մյուս

ելոյթ ունեցողների հետ այն առումով, որ նպատակին հասնելու համար թույլատրելի է ցանկացած միջոց:

12. 2006 թվականի դեկտեմբերի 8-ին Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունը որոշում է կայացրել ՔՕ-ի 301-րդ հոդվածով քրեական վարույթ հարուցելու մասին՝ վերոնշյալ հավաքի ժամանակ հնչած ելույթներում պետական իշխանությունը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր անելու փաստի առթիվ:

13. 2006 թվականի դեկտեմբերի 9-ին, ժամը 22:30-ին դիմումատուն ձերբակալվել է և բերման ենթարկվել ԱԱԾ:

14. Նույն ամսաթվին խուզարկվել է դիմումատուի գրասենյակը, որի արդյունքում հայտնաբերվել է մեկ ատրճանակ և տարբեր տեսակի փամփուշտներ:

15. 2006 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 15:45-ին կազմվել է ձերբակալման արձանագրությունը: Արձանագրության մեջ նշված է եղել, որ դիմումատուն կասկածվում է ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին կետով և 301-րդ հոդվածով նախատեսված հանցանքների կատարման մեջ: Պարզվում է, որ դիմումատուի անձնագիրը առգրավվել է:

16. Նույն ամսաթվին դիմումատուն հարցաքննվել է որպես կասկածյալ: Հրաժարվելով ցուցմունք տալ՝ նա նշել է, որ իր դեմ հարուցված քրեական վարույթը պայմանավորված է քաղաքական շարժառիթներով:

17. 2006 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին կետով և 301-րդ հոդվածով: Նա մեղադրվել է պետական իշխանությունը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր անելու մեջ և 1998 թվականին գորացրվելուց հետո իր գենքը ապօրինաբար պահելու և չհանձնելու մեջ: Դիմումատուի հետ միասին ՔՕ-ի 301-րդ հոդվածով մեղադրվել է նաև մեկ այլ անձ՝ Վ.Մ.-ն, որը նույնպես ելույթ է ունեցել վերոնշյալ հավաքի ժամանակ: Նրանց ելույթները ձայնագրված են եղել:

18. Նույն ամսաթվին քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ՝ հիմնավորելով, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությանը: Պարզվել է, որ նույն ամսաթվին խորհրդարանի երեք անդամ ներկայացրել են դիմում ընդհանուր իրավասության դատարան, որում իրենց անձնական երաշխավորությունն են ներկայացրել դիմումատուի պատշաճ վարքագծի մասին՝ հայցելով, որ կալանավորումը չկիրառվի որպես խափանման միջոց:

19. Նույն ամսաթվին ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը, ներառյալ մեղադրանքը և դրան առնչվող հանգամանքները: Ընդհանուր իրավասության դատարանը որոշել է բավարարել միջնորդությունը՝ հաշվի առնելով մեղսագրվող արաքի բնույթը և վտանգավորության աստիճանը և այն հանգամանքը, որ մեղսագրվող արարքը պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների ցանկում առաջին տեղում էր, ինչպես նաև համարելով, որ գործի նյութերը բավարար հիմքեր էին տալիս՝ ենթադրելու, որ դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությունը՝ գործադրելով անօրինական ազդեցություն վարույթում ներգրավված անձանց վրա:

20. 2006 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել՝ պատճառաբանելով, մասնավորապես, որ չկային հիմնավոր կասկածներ իր կողմից հանցանք կատարելու վերաբերյալ և որ ընդհանուր իրավասության դատարանը չէր ներկայացրել այն պատճառները, որոնք կհիմնավորեին իրեն՝ կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը: Նա պնդել է, մասնավորապես, որ նախաքննության մարմնի մոտ էր գտնվում իր բացատրությունների ձայնագրությունը, և այն պնդումը, որ դիմումատուն կարող էր անօրինական ազդեցություն գործադրել վկաների վրա, անհիմն էր: Ավելին, պնդումն առ այն, որ նա կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, հիմնավորված չէր որևէ փաստարկով կամ ապացույցով, մինչդեռ դատարանը հաշվի չէր առել այն հանգամանքը, որ դիմումատուն մշտական բնակություն ունի Հայաստանում և նրա խնամքին են գտնվում երկու անչափահաս երեխաները և մեծահասակ մայրը, որը վատառողջ է:

21. 2006 թվականի դեկտեմբերի 27-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը: Դիմումատուի՝ հիմնավոր կասկածի բացակայության մասին բողոքը մերժելիս՝ վերաքննիչ դատարանը պարզել է, որ դիմումատուի մասնակցությունը մեղսագրվող արարքներին, որոնք պարունակում էին ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին կետով և 301-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ, հիմնավորված էր այնպիսի ապացույցներով, ինչպիսիք են տարբեր արձանագրությունները և փորձագիտական եզրակացությունները, որոնք կազմվել էին քննիչի կողմից և քննության էին առնվել դատարանում: Ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված պատճառաբանությունների առումով վերաքննիչ դատարանը համարել է, որ դրանք հիմնավորված են:

22. Նույն ամսաթվին դիմումատուն ներկայացրել է միջնորդություն գրավի դիմաց կալանքից ազատվելու մասին: Համաձայն դիմումատուի պնդման՝ վերջինիս անձը հայտնի էր նախաքննության մարմնին և դատարանին, նա ուներ բնակության հստակ և կոնկրետ վայր և երբեք թաքնվելու փորձ չէր արել: Դիմումատուն խնդրել է դատարանին որոշել գրավի չափը:

23. 2007 թվականի դեկտեմբերի 30-ին մեկ այլ անձի՝ Վ.Ա.-ին ով դիմումատուի ընկերն էր, նույնպես, քրեական նույն վարույթի շրջանակներում առաջադրվել է մեղադրանք ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին կետով ապօրինի կերպով զենք և ռազմամթերք պահելու համար:

24. 2007 թվականի հունվարի 7-ին ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դիմումատուի՝ գրավի դիմաց ազատվելու դիմումը՝ նշելով վերջինիս կալանքը հիմնավորող նույն հիմքերը:

25. 2007 թվականի հունվարի 22-ին վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել այս որոշումը՝ ավելացնելով, որ դիմումատուն օտարերկրյա քաղաքացի է և, ընդամին, կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Ավելին, անթույլատրելի էր ազատ արձակել դիմումատուին գրավի դիմաց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն գործով մեղադրվող մեկ այլ անձ՝ Վ.Ա.-ն, որին նույնպես մեղադրանք էր առաջադրվել ապօրինի կերպով զենք և ռազմամթերք պահելու համար, գտնվում էր կալանքի տակ:

Գ. Դիմումատուի կալանքի ժամկետի երկարացումը և դատական վարույթը

26. 2007 թվականի փետրվարի 1-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան դիմումատուի կալանքի ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի փետրվարի 10-ին, երկու ամսով երկարաձգելու համար: Քննիչը պատճառաբանել է, որ դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, քանի որ օտարերկրյա քաղաքացի էր: Այնուհետև, նա պատճառաբանել է, որ 2007 թվականի հունվարի 15-ին դիմումատուն իր պաշտպանի միջոցով փոխանցել էր կարճ երկտող նույն գործով մեղադրվող Վ.Ա.-ին, որում ասվում էր՝ «պինդ կաց»: Սրանից ենթադրվում էր, որ դիմումատուն փորձում էր անօրինական ազդեցություն գործադրել վարույթի մասնակիցների վրա:

27. 2007 թվականի փետրվարի 7-ին ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով քննիչի միջնորդությունը և մյուս նյութերը, բավարարել է միջնորդությունը՝ համարելով, որ անհրաժեշտություն էր առաջացել ձեռնարկելու հետագա քննչական

միջոցներ և մատնանշել է այն նույն հիմքերը, որոնցով նախկինում հիմնավորել էր դիմումատուի շարունակական կալանքը:

28. 2007 թվականի փետրվարի 8-ին դիմումատուն բողոք է ներկայացրել: Իր բողոքում նա պատճառաբանել է, մասնավորապես, որ իր կալանքի ժամկետը երկարաձգելը իրականացվել էր ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետների խախտումով:

29. 2007 թվականի փետրվարի 23-ին վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ ընդհանուր իրավասության դատարանը, հաշվի առնելով քննիչի կողմից ներկայացված միջնորդության մեջ նշված հանգամանքները, կայացրել էր պատճառաբանված որոշում, քանի որ դիմումատուի կալանավորման հիմքերի առկայությունը չէր դադարել: Ինչ վերաբերում է ժամկետները խախտելուն, վերաքննիչ դատարանը չի համարել այդ խախտումն այնքանով էական, որ կարող էր ազդել քննիչի միջնորդության քննության վերաբերյալ ճիշտ որոշում կայացնելու վրա:

30. 2007 թվականի մարտի 30-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան՝ դիմումատուի կալանքի ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի ապրիլի 10-ին, նույն հիմնավորումներով երկու ամսով երկարաձգելու համար:

31. 2007 թվականի ապրիլի 4-ին ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել և բավարարել է այս միջնորդությունը նույն հիմնավորումներով: Ընդհանուր իրավասության դատարանի վարույթում դիմումատուի պաշտպանը հարցրել է դատարանին, թե արդյոք քննիչը իր կողմից ներկայացված միջնորդությանը կցել է հիմնավորող որևէ ապացույց, որը կարող էր քննության առնվել դատարանում: Նախագահող դատավորը պատասխանել է, որ քրեական գործի՝ միջնորդության հետ կապված նյութերը քննիչը կցել էր իր կողմից ներկայացված նախորդ միջնորդության քննության ժամանակ: Դատարանը քննության է առել և վերադարձրել այս նյութերը: Քրեական դատավարության օրենսգրքի նորմերի համաձայն՝ պաշտպաններին չէր թույլատրվում ծանոթանալ քրեական գործի նյութերին նախքան նախաքննության ավարտը:

32. Այս հայտարարությունից հետո դիմումատուի պաշտպանը ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացրել դատավորին՝ նրա կանխակալության հիմքով, մասնավորապես, այն հիմքով, որ դատավորը տվյալ գործի նյութերին չէր ծանոթացրել պաշտպանին նախորդ վարույթի ժամանակ: Դատավորը մերժել է ինքնաբացարկի միջնորդությունը՝ հղում անելով, մասնավորապես, ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին:

33. 2007 թվականի ապրիլի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել՝ վկայակոչելով նախկինում հնչեցրած փաստարկները:

34. Դիմումատուն պնդել է, որ իր պաշտպանը չի ծանուցվել դիմումատուի կողմից ներկայացված բողոքի քննության մասին և այդ իսկ պատճառով չի կարողացել ներկայանալ:

35. Կառավարությունը վիճարկել է այս պնդումը՝ հայտարարելով, որ 2007 թվականի մայիսի 11-ին վերաքննիչ դատարանը ծանուցագրեր է ուղարկել գլխավոր դատախազություն և դիմումատուի պաշտպանին, և նրանք ստացել են ծանուցագրերը, որով իրազեկվել են դիմումատուի բողոքի վերաբերյալ 2007 թվականի մայիսի 14-ին կայանալիք քննության մասին:

36. 2007 թվականի մայիսի 14-ին դիմումատուի պաշտպանները ինքնաբացարկի միջնորդություն են ներկայացրել վերաքննիչ դատարանի նախագահին՝ վիճարկելով բողոքը քննող դատավորների անաչառությունը: Իրենց կողմից հայտնած բացարկում պաշտպանները նշել են, որ մարտի 11-ին իրենց իրազեկել էին այն մասին, որ գործը հանձնվել է զեկուցող դատավորին:

37. Նույն ամսաթվին վերաքննիչ դատարանը քննության է առել դիմումատուի բողոքը երկու կողմերի բացակայությամբ: Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին 2007 թվականի փետրվարի 23-ին կայացրած որոշման մեջ տեղ գտած նույն պատճառաբանությամբ: Այս որոշմամբ նշվել է, որ կողմերը պատշաճ կերպով ծանուցվել են լսումների մասին, սակայն չեն ներկայացել: Այդ մասին պարզ է դառնում նաև դատական նիստի արձանագրությունից, որում նշված է եղել, որ կողմերը տեղեկացվել էին լսումների մասին դատավորի օգնականի կողմից՝ հեռախոսազանգով: Այդ որոշման պատճենը դիմումատուի պաշտպանները ստացել են 2007 թվականի մայիսի 18-ին:

38. 2007 թվականի մայիսին նախաքննությունն ավարտվել է և մայիսի 15-ից 29-ը ընկած ժամանակահատվածում դիմումատուին հնարավորություն է տրվել ծանոթանալու գործի նյութերին: Ըստ դիմումատուի՝ միայն այդ ժամանակ է նրան պարզ դարձել 2006 թվականի օգոստոսի 15-ին կայացված որոշման մասին, որով թույլատրվում էր իր հեռախոսային խոսակցությունների լսումը:

39. 2007 թվականի հունիսի 5-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և գործն ուղարկվել է դատարան:

40. 2007 թվականին հունիսի 7-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.-ն որոշում է կայացրել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

41. 2007 թվականի հունիսի 10-ին լրացել է դիմումատուի՝ 2007 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ նշանակված կալանքի ժամկետը:

42. 2007 թվականի հունիսի 12-ին դիմումատուն բողոք է ներկայացրել Գլխավոր դատախազին և Արդարադատության

նախարարին այն մասին, որ իր՝ դատարանի կողմից նշանակված կալանքի ժամկետը լրացել էր 2007 թվականի հունիսի 10-ին, և որ նրան երկարատև կալանքի տակ պահելն իրավաչափ չէր: Նա պնդել է, որ պետք է ազատ արձակվի:

43. 2007 թվականի հունիսի 22-ին դատավոր Մ.-ն որոշում է կայացրել դիմումատուի քրեական գործով դատաքննություն նշանակելու մասին: Այս որոշմամբ նշվել է, որ դիմումատուի նկատմամբ կիրառված խափանման միջոցը պետք է մնար անփոփոխ:

44. 2007 թվականի օգոստոսի 6-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել 235-րդ հոդվածի 1-ին մասով և արդարացրել՝ 301-րդ հոդվածով: Ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով դիմումատուի ելույթում արված հայտարարությունները, պարզել է, որ դրանք չէին կարող որակվել որպես պետական իշխանությունը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր: Ապօրինի կերպով զենք պահելու համար առաջադրված մեղադրանքի մասով ընդհանուր իրավասության դատարանը պարզել է, որ դիմումատուն, իր զորացրումից ի վեր, զենքն ու զինամթերքը պահել էր առանց թույլտվության: Դիմումատուն դատապարտվել է մեկ տարի և վեց ամիս ժամկետով ազատազրկման: Դիմումատուի՝ նույն գործով մյուս երկու մեղադրյալները նույնպես մեղավոր են ճանաչվել:

45. 2007 թվականի սեպտեմբերի 25-ին քրեական գործերով վերաքննիչ դատարանը անփոփոխ թողեց այս բողոքարկվող վճիռը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է 2003 թվականի օգոստոսի 1-ից)

46. ՔՕ-ի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 235. Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը

«1. Ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից եւ դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Հոդված 301. Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը

«Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999 թվականի հունվարի 12-ից)

1. Կալանքը

47. Համապատասխան դրույթների համառոտ նկարագրությանը ծանոթանալու համար տե՛ս *Poghosyan v. Armenia* գործով վճիռը (թիվ 44068/07, §§ 26-41, 2011 թվականի դեկտեմբերի 20): Այդ վճռում չեն մեջբերվել ՔԴՕ-ի հետևյալ դրույթները.

48. Համաձայն 135-րդ հոդվածի՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝ 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, 3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, 4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը: Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության կամ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝ 1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, 2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը, 3) տարիքը և առողջական վիճակը, 4) սեռը, 5) զբաղմունքի տեսակը, 6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, 7) գույքային դրությունը, 8) բնակության մշտական վայրի առկայությունը, 9) այլ էական հանգամանքներ:

49. 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը կամ դատախազը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց տաս օր առաջ, պետք է դատարան ներկայացնեն հիմնավորված միջնորդություն: Դատարանը, համաձայնվելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի՝ կալանքի տակ պահելու որոշած ժամկետը լրանալուց հինգ օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում:

50. 285-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդության մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը, եթե այդպիսիք առնչություն ունեն գործի հետ դատական քննության ժամի և վայրի մասին:

51. 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վերաքննիչ դատարանի կողմից կալանքի նկատմամբ դատական ստուգումն իրականացվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի ներկայությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն:

2. Գործի նյութերին ծանոթանալը

52. 65-րդ հոդվածի 2-րդ մասի 16-րդ ենթակետով սահմանվում է, որ մեղադրյալն իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին:

53. 73-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ պաշտպանը, նախաքննության ավարտման պահից, իրավունքի ունի ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն:

54. 201-րդ հոդվածով սահմանվում է, որ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

55. 265-րդ հոդվածով սահմանվում է, որ մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին և

որոշում է գործի նյութերի հետ վերջինիս ծանոթանալու ժամանակը և տեղը:

3. Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը

56. 281-րդ հոդվածով սահմանվում է, որ օպերատիվ-հետախուզական գործողությունները, որոնք կապված են քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հետ կատարվում են դատարանի որոշմամբ: Դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով:

57. 284-րդ հոդվածով սահմանվում է, որ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսակցության մասնակիցներից կամ հաղորդակցվողներից մեկը նախապես դրանք լսելու կամ վերահսկելու համաձայնություն է տվել, կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Սույն հոդվածով սահմանվում է նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի կողմից ներկայացված՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունների դատական քննարկման ընթացակարգը: Միջնորդության մեջ նշվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, միջոցառման իրականացման տեղը և ժամկետը, ինչպես նաև բոլոր այլ համապատասխան տվյալները: Միջնորդությանը կցվում են բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը: Դատարանը պետք է նշի միջնորդությունը բավարարելու կամ մերժելու հիմքերը: Դատարանի որոշման գործողության ժամկետը հաշվարկվում է դրա կայացման օրվանից և չի կարող գերազանցել վեց ամիսը, եթե որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու ժամկետը կարող է երկարացվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի՝ նման միջնորդություն պարունակող պատճառաբանված որոշման հիման վրա, սույն հոդվածով սահմանված կարգով:

Գ. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը (ընդունված է 2007 թվականի հոկտեմբերի 22-ին, ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 8-ին)

58. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները և սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելիս նրանց իրավունքները եւ պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը եւ վերահսկողությունը:

59. 14-րդ հոդվածով սահմանվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, որոնք ներառում են հեռախոսային խոսակցությունների վերահսկումը:

60. 26-րդ հոդվածով սահմանվում են հեռախոսային խոսակցությունների՝ ներառյալ ֆիքսված, բջջային հեռախոսային ցանցերով խոսակցությունների և ինտերնետային հեռախոսային խոսակցությունների վերահսկման որոշ տեխնիկական առանձնահատկությունները:

61. 31-րդ հոդվածով սահմանվում է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դա անցկացվի, կասկածվում է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, եւ եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

62. 39-րդ հոդվածով սահմանվում է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել տասներկու ամիսը:

Դ. «Իրավական ակտերի մասին» օրենքը (ուժի մեջ է 2002 թվականի մայիսի 31-ից)

63. 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է իրականացվել միայն այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի

ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

64. Դիմումատուն բողոքել է, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում իր կալանավորումը չի իրականացվել դատարանի որոշման հիման վրա և, հետևաբար, այն չի եղել իրավաչափ, իսկ 2007 թվականի փետրվարի 7-ին կալանքի ժամկետի երկարաձգումը չի համապատասխանել օրենքով սահմանված ժամկետներին: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, որը համապատասխանաբար սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...»

Ա. Ընդունելիությունը

1. Ներպետական իրավունքով նախատեսվող ժամկետների պահպանումը կալանավորման ժամկետը երկարաձգելիս

(ա) Կողմերի փաստարկները

65. Կառավարությունը փաստարկ է ներկայացրել, որ ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ 2007 թվականի փետրվարի 7-ին դիմումատուի կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշում կայացնելիս ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հնգօրյա ժամկետը չպահպանելու հանգամանքը բացասաբար չի անդրադարձել դիմումատուի՝ 5-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավունքների վրա: Դատարանների գործավարության որոշ թերացումների պատճառով տվյալ ժամկետի վերաբերյալ ձևական պահանջի չկատարումը չի հանգեցնում դիմումատուի կալանավորումը կամայական լինելուն՝ համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի, քանի որ դիմումատուն արդեն կալանքի տակ էր պահվում և ընդհանուր

իրավասության դատարանը որոշում էր կայացրել այն անփոփոխ թողնելու մասին:

66. Դիմումատուն փաստարկ է ներկայացրել, որ իր կալանքի ժամկետը պետք է լրանար 2007 թվականի փետրվարի 9-ին, այլ ոչ 2007 թվականի փետրվարի 10-ին, քանի որ կալանքի տակ պահելու ժամկետը պետք է հաշվվեր իրեն ազատությունից փաստացի զրկելու պահից, այլ ոչ թե ձերբակալման մասին արձանագրությունը կազմելու ամսաթվից: Ամեն դեպքում, թե՛ քննիչը, թե՛ ընդհանուր իրավասության դատարանը չէին կատարել ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների պահպանման պահանջը: Սա ներպետական իրավունքի կոպիտ խախտում է և հիմնավոր պատճառ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բեկանելու համար: Ավելին, քանի որ ներպետական իրավունքի խախտման հետևանքով խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, իր գործի ընթացքում ժամկետների պահպանման վերաբերյալ պահանջը չկատարելը հանգեցրել է նշյալ դրույթի խախտմանը:

(բ) Դատարանի գնահատականը

67. Դատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում առկա «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունները ըստ էության հղում են կատարում ներպետական իրավունքին և ամրագրում են այդ իրավունքի նյութաիրավական և ընթացակարգային պահանջները պահպանելու պարտավորությունը: Չնայած այն հանգամանքին, որ ներպետական իրավունքի մեկնաբանման և կիրառման հարցը առաջին հերթին ներպետական իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների խնդիրն է, այնուամենայնիվ 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ներպետական օրենսդրության պահանջները չպահպանելը Կոնվենցիայի խախտում է և Դատարանը կարող է ու պետք է քննի, թե արդյոք ներպետական իրավունքի պահանջները պահպանվել են (տե՛ս, ի թիվս այլոց, *Benham v. the United Kingdom*, 1996 թվականի հունիսի 10, § 41, Ձեկույցներ վճիռների և որոշումների մասին 1996-III, և *Assanidze v. Georgia* [GC], թիվ. 71503/01, § 171, ՄԻԵԴ 2004-II): Կալանավորման ժամկետը սկզբունքորեն «օրինական» է, եթե այն հիմնվում է դատարանի որոշման վրա: Նույնիսկ կալանավորման մասին որոշման թերությունները անհրաժեշտաբար չեն հանգեցնում կալանքի տակ պահելու հիմնական ժամկետի անօրինականությանը՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (տե՛ս վերոնշյալ *Benham*-ի գործը, §§ 42-47, և *Jéčius v. Lithuania*, թիվ. 34578/97, § 68, ՄԻԵԴ 2000-IX):

68. Սույն գործում դատարանի որոշմամբ սահմանված՝ դիմումատուին երկամսյա կալանքի տակ պահելու ժամկետը պետք է լրանար 2007 թվականի փետրվարի 10-ին: Դիմումատուն վիճարկել է այս փաստը և պնդել, որ կալանքի ժամկետը պետք է լրանար 2007 թվականի փետրվարի 9-ին: Դատարանը անհրաժեշտ չի համարում որոշում կայացնել տվյալ անհամաձայնության հարցով հետևյալ պատճառներով. ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում քննիչը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց տասը օր առաջ, պետք է դատարան ներկայացնի միջնորդություն և դատարանը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց հինգ օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում: Դիմումատուի գործում քննիչը կալանավորման ժամկետը երկարաձգելու միջնորդություն է ներկայացրել 2007 թվականի փետրվարի 1-ին, մինչդեռ ընդհանուր իրավասության դատարանը միջնորդությունը բավարարող և դիմումատուի կալանավորման ժամկետը երկու ամսով երկարաձգող իր որոշումն ընդունել է 2007 թվականի փետրվարի 7-ին:

69. Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ ընդհանուր իրավասության դատարանը 2007 թվականի փետրվարի 7-ին ընդունել էր դիմումատուի կալանավորման ժամկետը երկարաձգելու մասին որոշում, դիմումատուի ընթացիկ կալանքը դեռևս ուժի մեջ էր, որն իրավաչափ էր ընդհանուր իրավասության դատարանի նախորդ՝ 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ: Ավելին, 2007 թվականի փետրվարի 7-ի որոշումը, որը կայացվել էր կարճատև ուշացումով, այնուամենայնիվ, կայացվել էր կալանքի տակ պահելու թույլատրված ժամկետը լրանալուց մի քանի օր առաջ: Այն ընդունվել էր իրավասու դատարանի կողմից՝ քննիչի միջնորդության հիման վրա՝ համաձայն ներպետական իրավունքի պահանջների: Դատարանը համարում է, որ ենթադրյալ ընթացակարգային այս թերությունները, այն է՝ քննիչի միջնորդությունը ներկայացնելու և քննության առնելու կարճատև ուշացումները կրում էին այնքանով ձևական և աննշան բնույթ, որ չէին կարող ազդել կալանքի տակ պահելու ժամկետի օրինականության վրա:

70. Հետևաբար, գանգատի այս մասը ակնհայտ անհիմն է և պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի և 4-րդ կետի:

2. 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կալանքի օրինականությունը

71. Դատարանը նշում է, որ այս գանգատն ակնհայտ անհիմն չէ՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով: Դատարանը նաև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

72. Կառավարությունը փաստարկ է ներկայացրել, որ դիմումատուի նկատմամբ՝ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կիրառված կալանքը եղել է օրենքին, այն է՝ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի նորմերին համապատասխան:

73. Դիմումատուն վիճարկել է այս փաստարկը՝ պնդելով, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասը չէր կարող համարվել օրինական հիմք իրեն կալանավորելու համար:

2. Դատարանի գնահատականը

74. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է ազատության և անձի անձեռնմխելիության հիմնարար իրավունքը: Կոնվենցիայի համաձայն՝ այս իրավունքն առաջնային կարևորություն ունի «ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս *De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, 1971 թվականի հունիսի 18, § 65, շարք «Ա», թիվ 12):

75. Երբ հարցը վերաբերում է ազատությունից զրկելուն, ապա հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հետևաբար, էապես կարևոր է, որ ներպետական իրավունքով հստակորեն սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները, իսկ օրենքն էլ կիրառման մեջ ինքնին կանխատեսելի լինի, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին՝ չափանիշ, որով պահանջվում է, որ ցանկացած օրենք լինի բավարար չափով կոնկրետ, որպեսզի ցանկացած ոք, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան խորհրդատվությամբ, հնարավորություն ունենա կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետևանքները՝ այնքանով, որքանով դա ողջամտորեն հնարավոր է տվյալ իրավիճակում (տե՛ս *Steel and Others v. the United Kingdom*, 1998 թվականի սեպտեմբերի 23, § 54, Զեկույցներ 1998-VII):

76. Դատարանը նշում է, որ արդեն քննել է համանման բողոք Հայաստանի դեմ բերված մեկ այլ գործում, որում եկել է եզրահանգման,

որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանզի դիմումատուի նկատմամբ կալանքը չի կիրառվել դատարանի որոշման հիման վրա և, հետևաբար, եղել է անօրինական՝ նշյալ դրույթի իմաստով (տե՛ս վերոնշյալ *Poghosyan* գործը, §§ 56-64): Դատարանը չի տեսնում սույն գործով այլ եզրահանգում կատարելու որևէ պատճառ և եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ՝ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կիրառված կալանքը՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:

77. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

78. Դիմումատուն բողոքել է, որ ներպետական դատարանները չէին ներկայացրել իր՝ երկարատև կալանքի տակ գտնվելու պատճառները: Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վրա, համաձայն որի՝

«3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Ա. Ընդունելիությունը

79. Դատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի ներքո ակնհայտ անհիմն չէ: Այնուհետև, Դատարանը նշում է, որ սույն գանգատն անընդունելի չի կարող համարվել որևէ այլ հիմքով: Հետևաբար, նշված գանգատը հայտարարվում է ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

80. Կառավարությունը պնդել է, որ ներպետական դատարանները գործի նյութերի հիման վրա ներկայացրել են դիմումատուի՝ երկարատև կալանքի տակ գտնվելու վերաբերելի և բավարար պատճառներ:

81. Ըստ դիմումատուի կողմից բերված փաստարկի՝ ներպետական դատարանները չեն կարողացել ներկայացնել նրա՝ երկարատև կալանքի տակ գտնվելու վերաբերելի և բավարար պատճառներ, իսկ նրանց կողմից տրված պատճառաբանությունը հիմնականում համարժեք է եղել համապատասխան իրավական դրույթների մեջբերմանը՝ առանց դիմումատուի գործին հատուկ հանգամանքների գնահատման: Դատարանները անտեսել են այն հանգամանքը, որ դիմումատուն մեղադրվել է ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար և հաշվի չեն առել նաև դիմումատուի անձնական կարգավիճակը: Վերջապես, նախաքննությունը չի իրականացվել պատշաճ կերպով, քանի որ տևել է ավելի քան վեց ամիս, չնայած այն հանգամանքին, որ գործին առնչվող բոլոր ապացույցները հավաքվել էին նախաքննության երկրորդ օրը:

2. Դատարանի գնահատականը

(ա) Ընդհանուր սկզբունքները

82. Հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ: (տե՛ս *Smirnova v. Russia*, թիվ 46133/99 և 48183/99, § 58, ՄԻԵԿ 2003-IX (քաղվածքներ); *Becciev v. Moldova*, թիվ 9190/03, § 53, 2005 թվականի հոկտեմբերի 4, և *Khodorkovskiy v. Russia*, թիվ 5829/04, § 182, 2011 թվականի մայիսի 31):

83. Ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են փաստարկում այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որը, հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը, և պետք է դրանք ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում (տե՛ս *Letellier v. France*, 1991 թվականի հունիսի 26, § 35, շարք «Ա», թիվ 207): Ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան (տե՛ս *Clooth v. Belgium*, 1991 թվականի դեկտեմբերի 12, § 44, շարք «Ա», թիվ 225):

84. Ձերբակալվածի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի շարունակական գոյությունը անհրաժեշտ պայման է (*sine qua non*) տևական կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերով շարունակվում է հիմնավորվել ազատությունից զրկելը: Եթե այդօրինակ հիմքերը «հիմնավոր» և «բավարար» են, Դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու ներպետական մարմինները արդյոք դրսևորել են «պատշաճ ջանասիրություն» (տե՛ս *Labita v. Italy* [ՄՊ], թիվ 26772/95, § 153, ՄԻԵԿ 2000-IV):

85. Կոնվենցիայի նախադեպային իրավունքը մշակել է հանցագործության համար կասկածվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս *Stögmüller v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք «Ա», թիվ 9), վտանգը, որ մեղադրյալը ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը, (տե՛ս *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք «Ա», թիվ 7) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս *Matznetter v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9, շարք «Ա», թիվ 10) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս *Letellier-ի* գործը, վերևում մեջքերված, § 51):

86. Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգավորության աստիճանը չի կարող չափվել միայն նախատեսվող պատժի խստության հիման վրա: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի գործոնները հաշվի առնելով, որոնք կարող են կա՛մ հաստատել քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգի առկայությունը, կա՛մ կարող են այն դարձնել այնքան չնչին, որ հնարավոր չլինի հիմնավորել կալանքը նախքան դատական քննությունը (տե՛ս *Yağci and Sargin v. Turkey*, 1995 թվականի հունիսի 8, § 52, շարք «Ա», թիվ 319Ա): Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը պետք է գնահատվի այնպիսի հանգամանքների լույսի ներքո, ինչպիսիք են անձի բնութագիրը, նրա բարոյականությունը, տուն ունենալու հանգամանքը, զբաղվածությունը, ունեցվածքը, ընտանեկան կապերը, ինչպես նաև բոլոր կապերն այն պետության հետ, որում նա հետապնդվում: Ծանր պատժի ակնկալիքը և ապացույցների ծանրակշիռ լինելը կարող են վերաբերելի լինել, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և հնարավոր է, որ անհրաժեշտ լինի օգտագործել երաշխիքներ ստանալու հնարավորությունը՝ բոլոր վտանգները չեզոքացնելու նպատակով (տե՛ս *Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27, § 10, շարք «Ա», թիվ 8):

87. Մեղադրյալի կողմից վարույթի պատշաճ ընթացքը խոչընդոտելու վտանգի վրա չի կարելի հիմնվել վերացական կարգով (*in abstracto*). այն պետք է հիմնավորել փաստական տվյալներով (տե՛ս *Trzaska v. Poland*, թիվ 25792/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11):

(բ) Վերոհիշյալ սկզբունքների կիրառումը սույն գործում

88. Սույն գործում Դատարանը նշում է, որ դիմումատուին կալանավորելու և կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշումներ կայացնելիս ներպետական դատարանները հիմնվել են մեղադրանքի ծանրության և դիմումատուի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և վարույթին խոչընդոտելու վտանգի վրա:

89. Դատարանը նշում է, որ թե՛ ընդհանուր իրավասության դատարանը, թե՛ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը դիմումատուին կալանավորելու և կալանքի ժամկետը երկարաձգելու իրենց որոշումներում սահմանափակվել են նշված հիմքերը վերացական և կարծրատիպային ձևով կրկնելով, առանց մատնանշելու որևէ պատճառ առ այն, թե ինչու են իրենք հիմնավորված համարել այն ենթադրությունները, թե դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել վարույթի ընթացքին: Նրանք չեն էլ փորձել հերքել դիմումատուի փաստարկները: Այն հանցագործության ծանրության ընդհանրական վկայակոչումը, որի մեջ մեղադրվում էր դիմումատուն, և որի վրա մի քանի առիթով հիմնվել են դատարանները, չի կարող ենթադրյալ վտանգների համար բավարար հիմնավորում համարվել: Ավելին, երբ գործը հանձնվել է դատարան, առաջին ատյանի դատարանը դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգման առնչությամբ ոչ մի հիմնավորում չի ներկայացրել (տե՛ս վերը նշված § 43):

90. Ճիշտ է, մեկ դեպքում գրավով կալանքից ազատվելու մասին դիմումատուի դիմումը մերժելիս՝ վերաքննիչ դատարանը քրեական վարույթն իրականացնող մարմնից նրա թաքնվելու վտանգը հիմնավորել է այն փաստով, որ նա օտարերկրյա քաղաքացի է (տե՛ս վերը նշված § 25): Դատարանը համարում է, որ հիմնավոր գործոն լինելով հանդերձ, այն ինքնին բավարար չէ գրավով կալանքից չազատելը հիմնավորելու համար: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված գործոններից ոչ մեկը (տե՛ս վերը նշված § 86), ներառյալ այն փաստը, որ դիմումատուն 1992 թվականից ի վեր մշտապես բնակվել է Հայաստանում և ունեցել է ընտանիք, սեփականություն և երկրի հետ ակնհայտորեն ամուր սոցիալական կապեր: Այն փաստը, որ նրա

անձնագիրը առգրավվել էր, նույնպես անտեսվել է, չնայած դա զգալիորեն նվազեցնում էր փախուստի վտանգը:

91. Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի նույն որոշման մեջ նշված գրավով կալանքից չազատելու մյուս հիմքին, մասնավորապես՝ որ նույն գործով մեղադրվող մեկ այլ անձ նույնպես գտնվում էր կալանքի տակ, Դատարանի համար պարզ չէ, թե ինչպես էր այն առնչվում դիմումատուի գործի հետ: Այսպիսով, այն դեպքում, երբ կալանքի տակ երկարատև պահելու միակ պատճառը այն մտավախությունն է, որ մեղադրյալը կթաքնվի քրեական վարույթն իրականացնող մարմնից և, այդպիսով, հետագայում կխուսափի դատական քննությանը ներկայանալուց, ապա պետք է ընդունել նրան ազատ արձակելու մասին որոշում, եթե հնարավոր է նրանից երաշխիքները ստանալ, որոնք կապահովեն նրա ներկայությունը (տե՛ս *Wemhoff*, վերևում մեջբերված, § 15): Սույն գործում ներպետական դատարանները թերացել են այս հնարավորությունը անգամ դիտարկելու հարցում և մերժել են գրավով կալանքից ազատվելու նրա դիմումը՝ առանց նրա կոնկրետ իրավիճակի մանրամասն քննություն անցկացնելու:

92. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Դատարանը գտնում է, որ այն պատճառաբանությունները, որոնց հիման վրա ընդհանուր իրավասության դատարանի և վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման և գրավով ազատելը մերժելու մասին որոշումներ են ընդունվել, չեն եղել «հիմնավոր և բավարար»:

93. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

94. Դիմումատուն բողոք է բերել առ այն, որ 2007 թվականի փետրվարի 7-ին ընդհանուր իրավասության դատարանում վարույթը մրցակցային չի եղել, և որ իրեն զրկել են 2007 թվականի մայիսի 14-ին վերաքննիչ դատարանում տեղի ունեցած բանավոր լսումների հնարավորությունից: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Դատարանը որոշեց քննել այս գանգատները Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո (տե՛ս ստորև նշված §§101-102), որը վերաբերելի մասով սահմանում է հետևյալը՝

«4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն

անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:»

Ա. Ընդունելիությունը

1. Մրցակցային դատավարություն և կողմերի հավասարություն

95. Կառավարությունը պնդել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի չէր 2007 թվականի փետրվարի 7-ին կալանքի տակ պահելու հարցով դատական նիստի պարագայում, քանի որ այն որոշում էր քննիչի միջնորդությամբ դիմումատուի կալանքի ժամկետի երկարաձգման հետ կապված հարցերը, մինչդեռ սույն հոդվածը կիրառելի էր միայն կալանավորված անձի կողմից նախաձեռնած վարույթի դեպքում: Հետևաբար, կալանքի տակ պահելու հարցով տվյալ դատական նիստը սահմանված էր 5-րդ հոդվածի 3-րդ կետով, որով չէր պահանջվում, որպեսզի առաջին ատյանի դատարանի վարույթը լիներ մրցակցային:

96. Դիմումատուն պնդել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի էր տվյալ վարույթի դեպքում:

97. Դատարանը նշում է, որ Կառավարության առարկությունը սերտորեն կապված է դիմումատուի գանգատի բովանդակության հետ և, հետևաբար, պետք է կցվի գործի ըստ էության քննությանը:

2. Եզրակացություն

98. Դատարանը նշում է, որ այս գանգատներն ակնհայտ անհիմն չեն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով: Այնուհետև, Դատարանը նշում է, որ դրանք անընդունելի չեն որևէ այլ հիմքով: Հետևաբար, նշված գանգատները հայտարարվում են ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Մրցակցային դատավարություն և կողմերի հավասարություն

(ա) Կողմերի փաստարկները

99. Կառավարությունը պնդել է, որ ՔԴՕ-ի 201-րդ հոդվածը թույլ է տալիս, որպեսզի նախաքննության նյութերը հրապարակվեն միայն քննչական մարմնի թույլտվությամբ: Հետևաբար, նախքան 2007 թվականի փետրվարի 7-ի դատական նիստը քննիչը կալանքի

Ժամկետի երկարաձգման հարցով իր միջնորդության հետ միասին ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել իր միջնորդությունը հիմնավորող որոշ փաստաթղթեր: Միևնույն ժամանակ քննիչը նպատակահարմար չի գտել այդ փաստաթղթերը ներկայացնել դիմումատուին և նրա պաշտպանին, քանի որ ըստ օրենքի՝ մեղադրյալն իրավունք ուներ ծանոթանալ գործի նյութերին միայն նախաքննության ավարտից հետո: Այնուամենայնիվ, սա խնդիր չի առաջացրել, քանի որ տվյալ վարույթը, ի տարբերություն 5-րդ հոդվածի 4-րդ կետի, առնչվում էր 5-րդ հոդվածի 3-րդ կետին, և մրցակցային քննության մասին պահանջը կիրառելի չէր:

100. Դիմումատուն պնդել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվում էր, որ վարույթը լինի մրցակցային և ապահովվի կողմերի հավասարությունը, ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել: Ո՛չ նա, ո՛չ նրա պաշտպանը տեղյակ չեն եղել, որ քննիչը 2007 թվականի փետրվարի 1-ի իր միջնորդությունը հիմնավորող որոշ փաստաթղթեր է ներկայացրել նախագահող դատավորին: Օրենքով սահմանված սահմանափակումների պատճառով այդ փաստաթղթերը նրանց հասանելի չեն եղել, և նրանք չեն կարողացել դրանց շուրջ մեկնաբանություններ անել: Հետևաբար, նա գրկվել է իր գործը արդյունավետորեն ներկայացնելու հնարավորությունից, որը 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում է:

(բ) Դատարանի գնահատականը

101. Դատարանը նախ կանդրադառնա տվյալ գործի նկատմամբ 5-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառելիության հարցին, մասնավորապես, 2007 թվականի փետրվարի 7-ին կայացած կալանքի վերաբերյալ դատական նիստին, որում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը որոշել էր բավարարել դիմումատուի կալանքի ժամկետի երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը:

102. Դատարանը նշում է, որ սույն գործով Կառավարության կողմից բարձրացված նմանատիպ առարկություն քննվել և մերժվել է *Lebedev v. Russia* գործով (թիվ 4493/04, 2007 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռ): Այդ գործով Դատարանը համարել է, որ մեծ նշանակություն չունի այն, թե արդյոք ներպետական դատարանը որոշումը կայացրել է պաշտպանության կողմի ներկայացրած ազատ արձակման միջնորդության, թե մեղադրանքի կողմի ներկայացրած կալանավորման միջնորդության հիման վրա (տե՛ս նույն տեղում, § 72): Սույն եզրակացությանը հանգելիս՝ Դատարանը հղում է կատարել մի շարք գործերի վրա, որոնցով որոշել էր, որ մեղադրանքի կողմի

միջնորդությամբ դատարանի կողմից դիմումատուի կալանքի ժամկետի երկարացումը ներառում է նաև 5-րդ հոդվածի 4-րդ կետի երաշխիքները (տե՛ս *Grauzinis v. Lithuania*, թիվ 37975/97, § 33, 2000 թվականի հոկտեմբերի 10, *Włoch v. Poland*, թիվ 27785/95, §§ 125. և հաջորդները, ՄԻԵԿ 2000X1, և *Telecki v Poland* (որոշում) թիվ 56552/00, 2003 թվականի հուլիսի 3): Այնուհետև Դատարանը եզրակացրել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելի է դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ գործերի քննության դեպքում (տե՛ս *Lebedev*, վերևում մեջբերված, § 74): Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի երաշխիքները կիրառելի են 2007 թվականի փետրվարի 7-ին կայացած՝ կալանքի հարցի քննության նկատմամբ և որոշում է մերժել Կառավարության առարկությունը:

103. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջվում է, որպեսզի կալանքի դեմ բերված բողոքը քննելիս դատարանը ապահովի դատական քննության երաշխիքները: Քննությունը պետք է լինի մրցակցային, և միշտ պետք է ապահովվի «կողմերի հավասարությունը» մեղադրանքի կողմի և կալանավորված անձի միջև: Կողմերի հավասարությունն ապահովված չի համարվում, եթե պաշտպանին մերժում են տրամադրել գործով նախաքննությամբ ձեռք բերված այն փաստաթղթերը, որոնք կարևոր են նրա պաշտպանյալին կալանքի տակ պահելու օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու համար (տե՛ս *Lamy v. Belgium*, 1989 թվականի մարտի 30, § 29, շարք «Ա», թիվ 151, *Nikolova v. Bulgaria* [GC], թիվ 31195/96, § 58, ՄԻԵԿ 1999II, և *Garcia Alva v. Germany*, թիվ 23541/94, § 39, 2001 թվականի փետրվարի 13): Այս սկզբունքը կարող է նաև դատարանից պահանջել հարցաքննել այն վկաներին, որոնց ցուցմունքները առերևույթ կարող են էական ազդեցություն ունենալ կալանքը երկարացնելու հիմքերի օրինականության վրա (տե՛ս *A. and Others v. the United Kingdom* [GC], թիվ 3455/05, § 204, ՄԻԵԿ 2009):

104. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ քննիչը 2007 թվականի փետրվարի 1-ին միջնորդություն է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով երկարացնել դիմումատուի կալանքի ժամկետը: Ի հիմնավորումն սույն միջնորդության՝ քննիչը ներկայացրել է գործի նյութերում առկա որոշ ապացույցներ, որոնք չեն տրամադրվել դիմումատուի պաշտպաններին, և նրանք չեն կարողացել որևէ մեկնաբանություն անել դրանց վերաբերյալ կամ վիճարկել այդ ապացույցները: Հաջորդ անգամ կալանքի հարցի քննության ընթացքում այս փաստն ընդունվել է ընդհանուր իրավասության դատարանի կողմից (տե՛ս վերևում՝ §31): Կառավարությունը նույնպես ընդունել է սա, սակայն փորձել է դա

հիմնավորել այն փաստով, որ ներպետական իրավունքով արգելվում է գործի նյութերը պաշտպանության կողմին տրամադրել մինչև նախաքննության ավարտը: Դատարանը համարում է, որ ներպետական իրավունքն այս առումով չափազանց մեծ սահմանափակում է նախատեսում: Ինչպես արդեն նշվել է նախորդ կետում, իր վստահորդին վերաբերող պնդումների հիմքը և նրան կալանքի տակ պահելու օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու նպատակով պաշտպանության կողմին պետք է տրամադրվեն գործին առնչվող առնվազն այն նյութերը, որոնք վերջինիս անհրաժեշտ են դա անելու համար, այդ թվում նաև՝ արդարացնող ապացույցները, որոնք ևս պետք է տրամադրվեն պաշտպանության կողմին: Այս առումով Դատարանը տարբերակում է դնում քրեական գործի բոլոր նյութերի միջև, որոնք 6-րդ հոդվածի ներքո, որպես ընդհանուր կանոն, պետք է բացահայտվեն անձին մեղավոր ճանաչելու հարցը որոշելու համար (այնուամենայնիվ, տե՛ս նույն տեղում՝ § 205), և այն նյութերի միջև, որոնք պետք է տրամադրվեն 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո նախատեսվող վարույթի առնչությամբ: Այնուամենայնիվ, սույն գործի պարագայում դա տեղի չի ունեցել: Ուստի Դատարանը եզրակացնում է, որ այն ընթացակարգով, որով 2007 թվականի փետրվարի 7-ին իրականացվել է վարույթը ընդհանուր իրավասության դատարանում, մրցակցության սկզբունքը և կողմերի հավասարությունը չեն երաշխավորվել:

105. Համապատասխանաբար, այս առումով խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը:

2. Բանավոր դատախոսները

(ա) Կողմերի փաստարկները

106. Կառավարությունը պնդել է, որ 2007 թվականի մայիսի 14-ի դատական նիստի մասին դիմումատուի պաշտպանները ծանուցվել են պատվիրված նամակի միջոցով: Դատարանը ծանուցագիրն ուղարկել է 2007 թվականի մայիսի 11-ին, որը հանձնվել է նրանց: Բացի այդ՝ դատական նիստի օրվա և ժամի մասին նրանց ծանուցվել է նաև հեռախոսով, սակայն նրանք չեն ներկայացել: Վերաքննիչ դատարանը շարունակել է բողոքի քննությունը ՔԴՕ-ի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն: Հետևաբար, վարույթը համապատասխանել է 5-րդ հոդվածի 4-րդ կետին: Ի հիմնավորումն իր փաստարկների՝ Կառավարությունը ներկայացրել է փոստային անդորրագրի պատճենը, որը պարունակում է դիմումատուի պաշտպանների անունները, վերաքննիչ դատարանի դրոշմակնիքը և դարձերեսին զետեղված

փոստային ծառայության դրոշմակնիքը՝ 2007 թվականի մայիսի 11-ի ամսաթվով:

107. Դիմումատուն պնդել է, որ Կառավարությունը որևէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ նրա պաշտպանները ժամանակին ծանուցվել են 2007 թվականի մայիսի 14-ի դատական նիստի մասին: Ներկայացված փոստային անդորրագիրը չէր կարող ծառայել որպես նման ապացույց, քանի որ անդորրագրի վրա ոչ մի հասցե չկար և հնարավոր չէր պարզել տվյալ անդորրագրով ուղարկված նամակի բովանդակությունը: Ավելին, ներկայացված անդորրագրում ոչինչ չի վկայում այն մասին, որ տվյալ նամակն ուղարկվել է որպես պատվիրված նամակ: Գոյություն չունեի որևէ այլ փաստաթուղթ առ այն, որ նրանք ստացել էին ծանուցագիրը:

108. Դիմումատուն պնդել է, որ վերաքննիչ դատարանի դատական նիստից իր պաշտպանների բացակայությամբ խախտվել է 5-րդ հոդվածի 4-րդ կետը: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը պահանջել և ստացել է մի շարք փաստաթղթեր, որոնք քննության չեն ենթարկվել ընդհանուր իրավասության դատարանի դատական նիստի ժամանակ: Նրա պաշտպանները չեն կարողացել մեկնաբանություններ կատարել այդ փաստաթղթերի շուրջ կամ ներկայացնել նրա գործը:

(բ) Դատարանի գնահատականը

109. Դատարանը վերահաստատում է, որ որոշ հանգամանքներում 5-րդ հոդվածի 4-րդ կետով կարող է պահանջվել կալանքի տակ գտնվող անձի ներկայությունը բանավոր դատախոսներին (տե՛ս *Singh v. the United Kingdom*, 1996 թվականի փետրվարի 21, §§67-69, Ձեկույցներ 1996I, *Grauzinis v. Lithuania*, վերևում մեջբերված, §§33-34, *Waite v. the United Kingdom*, թիվ 53236/99, § 59, 2002 թվականի դեկտեմբերի 10, *Lebedev*, վերևում մեջբերված, § 113, և *Khodorkovskiy*, վերևում մեջբերված, § 235):

110. Այնուհետև, Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը Բարձր պայմանավորվող պետություններին չի պարտավորեցնում ունենալ կալանքի իրավաչափությունը և ազատման վերաբերյալ դիմումները քննելու իրավասությամբ օժտված երկրորդ աստիճանի մարմին: Այդուհանդերձ, այդպիսի համակարգ գործադրող պետությունը սկզբունքորեն պետք է ապահովի բողոքարկման միևնույն երաշխիքները կալանավորվածների համար, ինչն առաջին աստիճանի դատարաններում բողոքարկման ժամանակ (տե՛ս *Toth v. Austria*, 1991 թվականի դեկտեմբերի 12, § 84, շարք «Ա», թիվ 224): Ավելին, չնայած Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով չի երաշխավորվում կալանքի իրավաչափության մասին որոշումները բողոքարկելու իրավունքը, այդ

դրույթի նպատակից հետևում է, որ վերաքննիչ դատարանները պետք է պահպանեն դրա պահանջները, եթե բողոքարկվում է կալանքի իրավաչափության մասին որոշումը (տե՛ս *Rutten v. the Netherlands*, թիվ 32605/96, § 53, 2001 թվականի հուլիսի 24):

111. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ ո՛չ դիմումատուն, ո՛չ էլ նրա պաշտպանները ներկա չեն գտնվել 2007 թվականի մայիսի 14-ի դատական նիստին, որի ժամանակ վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել կալանքի ժամկետը երկարաձգելու մասին ընդհանուր իրավասության դատարանի 2007 թվականի ապրիլի 4-ի որոշումը: Կողմերը վիճում են այն մասին, թե արդյոք դիմումատուի պաշտպաններին ժամանակին ծանուցել են այս դատական նիստի մասին:

112. Այս առումով դատարանը նշում է, որ Կառավարության ներկայացրած փոստային անդորրագրից բխում է, որ դիմումատուի փաստաթաններին 2007 թվականի մայիսի 14-ին ժամը 14:00-ին տեղի ունեցած դատական նիստին հրավիրելու ծանուցագիրը նրանց է ուղարկվել 2007 թվականի մայիսի 11-ին: Ավելին, վերաքննիչ դատարանում 2007 թվականի մայիսի 14-ին տեղի ունեցած դատական նիստի արձանագրությունից հետևում է, որ փաստաթաններին ծանուցել էին նաև հեռախոսով, ինչը նրանք չժխտեցին: Նման հանգամանքներում բավարար ապացույցներ չկան, որպեսզի հնարավոր լինի եզրակացնել, որ 2007 թվականի մայիսի 14-ին տեղի ունեցած դատական նիստին դիմումատուի պաշտպանների չներկայանալը կարելի է վերագրել իշխանություններին: Ուստի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի առերևույթ խախտում տեղի չի ունեցել:

113. Հետևաբար, գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է և պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի և 4-րդ կետի:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

114. Դիմումատուն բողոքել է, որ իր հեռախոսային խոսակցությունների գաղտնալուծումը կատարվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի երաշխիքների խախտմամբ, որը շարադրված է հետևյալ կերպ՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական

հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Ա. Ընդունելիությունը

115. Դատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի ներքո ակնհայտ անհիմն չէ Դատարանը նաև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

(ա) Կառավարությունը

116. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը հիմնավորված էր ԱԱԾ-ում ստացված տեղեկությունները հետաքննելու նպատակով, որոնցով ենթադրվում էր, որ դիմումատուի կողմից ղեկավարվող կազմակերպությունն իրականացնում էր գործողություններ, որոնց նպատակը հակասահմանադրական ճանապարհով կառավարության տապալումն էր: Միջամտությունը կատարվել է օրենքին համապատասխան, քանի որ դրա հիմքերը և ընթացակարգը սահմանված էին ՔԴՕ-ի նորմերով: Այն հետապնդել է օրինական նպատակ և բխել է ազգային անվտանգության շահերից և անհրաժեշտ էր անկարգություններն ու հանցագործությունը կանխելու համար:

(բ) Դիմումատուն

117. Դիմումատուն պնդել է, որ տվյալ ժամանակահատվածում Հայաստանում չկար օրենք, որով սահմանվեր հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալսման և ձայնագրման ընթացակարգը: Կառավարության պնդումները կրել են ընդհանուր բնույթ, և չեն մատնանշվել անգամ ՔԴՕ-ի համապատասխան դրույթները: Այդուհանդերձ, ՔԴՕ-ի 281-րդ հոդվածի համաձայն օպերատիվ և հետախուզական միջոցառումների

տեսակները՝ ներառյալ հեռախոսային խոսակցությունների գաղտնալուծումը, սահմանվում էին «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով, որն ընդունվել և ուժի մեջ էր մտել՝ հաջորդելով նրա գործի հանգամանքներին, մասնավորապես, համապատասխանաբար, 2007 թվականի հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Միայն սույն օրենքով են ներդրվել որոշ օրենսդրական երաշխիքներ անձնական կյանքի և հաղորդակցության իրավունքների պաշտպանության նպատակով: «Իրավական ակտերի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ կետով արգելվում է իրավական նորմի կիրառումն այն դեպքում, երբ դրա կիրարկումը պայմանավորված է մեկ այլ իրավական ակտի ընդունմամբ: Ուստի, ՔԴՕ-ի 281-րդ հոդվածը չէր կարող կիրառվել նախքան «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունումը: Վերջում անհրաժեշտ է նշել, որ տվյալ ժամանակահատվածում չկար օրենք, որով կարգավորվեին 2006 թվականի օգոստոսի 15-ի դատական որոշմամբ լիազորված միջոցառումները և որով նրա իրավունքների համար երաշխիքներ կապահովվեին: Արդյունքում՝ ԱԱԾ-ն իրականացրել է նրա նամակագրության և այլ հաղորդակցությունների ու խոսակցությունների ամբողջական վերահսկողություն:

118. Ավելին, 2006 թվականի օգոստոսի 15-ի դատական որոշման աղոտ և անորոշ ձևակերպումը ԱԱԾ-ին գործնականում անսահմանափակ իշխանություն էր տվել ամբողջական վերահսկողություն սահմանելու նրա՝ ներառյալ իր կնոջ, մոր, երեխաների, այլ ազգականների, ընկերների, աշխատակիցների, գործընկերների և իր մնացած անձնական, սոցիալական և մասնագիտական շրջապատի հետ ունեցած հաղորդումների և խոսակցությունների վրա: Մինչ այդ նրան չէին տեղեկացրել վեցամսյա վերահսկողության ժամանակահատվածի ընթացքում հավաքագրված տվյալների ճակատագրի մասին: Այն փաստը, որ հետաքննող մարմինը տեղյակ էր, որ 2007 թվականի հունվարի 15-ին նա իր պաշտպանի միջոցով երկտող էր փոխանցել նույն գործով մեղադրվող մեկ այլ անձի, նույնպես ցույց էր տալիս, որ քրեակատարողական հիմնարկում իր պաշտպանների հետ ունեցած նրա բոլոր քննարկումները եղել են հսկողության իրական վտանգի տակ:

(գ) Կառավարության պատասխանը

119. Ի պատասխան դիմումատուի դիտարկումներին՝ Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի հաղորդակցությունների վերահսկողությունը կարգավորվում էր ՔԴՕ-ի 281-րդ և 284-րդ հոդվածներով: Դիմումատուի՝ «Իրավական ակտերի մասին» օրենքի

68-րդ հոդվածի 4-րդ մասի մեկնաբանությունը սխալ էր, և ՔԴՕ-ի 281-րդ և 284-րդ հոդվածների կիրառումը պայմանավորված չէր «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի ընդունմամբ: Այդ օրենքով պարզապես սահմանվելու էին օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, իսկ սա չի նշանակում, որ հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների հսկողությունը իրավական հիմքեր չուներ:

2. Դատարանի գնահատականը

(ա) Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն դիմումատուի անձնական կյանքի և հաղորդակցության նկատմամբ հարգանքի իրավունքի նկատմամբ

120. Դատարանը նշում է, որ չի վիճարկվում այն, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի ներքո սույն գործում ԱԱԾ-ի կողմից իրականացված հսկողությունը հավասարազոր է եղել դիմումատուի իրավունքների նկատմամբ միջամտության: Գլխավոր խնդիրն այն է, թե արդյո՞ք այս միջամտությունը արդարացված էր 8-րդ հոդվածի 2-րդ կետի ներքո, մասնավորապես, արդյո՞ք այն եղել է «օրենքին համապատասխան», հետապնդել է օրինական նպատակ և «անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում»՝ այդ նպատակին հասնելու համար:

(բ) Արդյո՞ք միջամտությունը արդարացված էր

121. Դատարանն ուշադրություն է հրավիրում իր կողմից սահմանված նախադեպային իրավունքին, համաձայն որի՝ «օրենքին համապատասխան» արտահայտությամբ ոչ միայն պահանջվում է, որ վիճարկվող միջոցը որոշակի հիմքեր ունենա ներպետական իրավունքում, այլ նաև այդ արտահայտությունը վերաբերում է խնդրո առարկա օրենքի որակին, այսինքն պահանջվում է, որ այն հասանելի լինի շահագրգիռ անձի համար և կանխատեսելի լինի իր հետևանքների առումով (տե՛ս *Amann v. Switzerland* [GC], թիվ 27798/95, § 50, ՄԻԵԿ 2000II, և *Rotaru v. Romania* [GC], թիվ 28341/95, § 52, ՄԻԵԿ 2000V):

122. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների վերահսկման թույլտվություն տալիս ընդհանուր իրավասության դատարանը հղում է կատարել ՔԴՕ-ի 281-րդ և 284-րդ հոդվածներին, որոնցով թույլատրվում է հեռախոսային խոսակցությունների վերահսկման իրականացումը որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում: Դիմումատուն պնդել է, որ ՔԴՕ-ի 281-րդ

հողվածը տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ չէր, քանի որ դրա կիրառումը պայմանավորված էր մեկ այլ իրավական ակտի ընդունմամբ: Այս առումով դատարանը վերահաստատում է, որ ներպետական իրավունքի մեկնաբանման և կիրառման հարցը ներպետական իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների, առաջնային պարտավորությունն է (տե՛ս *Kruslin v. France*, 1990 թվականի ապրիլի 24, § 29, շարք «Ա», թիվ 176Ա, և *Kopp v. Switzerland*, 1998 թվականի մարտի 25, § 59, Ձեկույցներ 1998II): Հաշվի առնելով ասվածը և նկատի ունենալով վիճարկվող իրավական դրույթները՝ Դատարանը բավարար հիմքեր չի տեսնում դիմումատուի հայտարարության հետ համաձայնելու համար: Այսպիսով, Դատարանը համարում է, որ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը ներպետական իրավունքի տեսանկյունից եղել է հիմնավորված: Նա նաև համարում է, որ այս իրավական դրույթների հասանելիության առումով ոչ մի խնդիր չի ծագում:

123. Ինչ վերաբերում է դրանց կանխատեսելիությանը, ապա Դատարանը վերահաստատում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նպատակներից բխող հաղորդակցության վերահսկման առանձնահատուկ համատեքստում՝ կանխատեսելիության պահանջը չի կարող նշանակել այն, որ որևէ անհատ պետք է հնարավորություն ունենա կանխատեսելու, թե երբ են իշխանությունները վերահսկելու իր հաղորդակցությունը, որպեսզի նա կարողանա համապատասխանեցնել իր վարքագիծը: Այդուհանդերձ, օրենքի դրույթները պետք է լինեն բավականաչափ հստակ, որպեսզի քաղաքացիները պատշաճ կերպով տեղեկացվեն այն հանգամանքների և պայմանների մասին, որոնց պարագայում իշխանությունները լիազորված են դիմել անձնական կյանքը և հաղորդակցության գաղտնիությունը հարգելու իրավունքի նկատմամբ այս գաղտնի և վտանգավոր միջամտությանը (տե՛ս *Malone v. the United Kingdom*, 1984 թվականի օգոստոսի 2, § 67, շարք «Ա», թիվ 82):

124. Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը և վերահսկման այլ ձևերը լուրջ միջամտություն են անձնական կյանքի և հաղորդակցության նկատմամբ և համապատասխանաբար պետք է հիմնված լինեն հատկապես հստակ «օրենքի» վրա: Կարևոր է խնդրի վերաբերյալ ունենալ հստակ և մանրամասն կանոններ, հատկապես երբ կիրառման համար առկա տեխնոլոգիաները շարունակաբար կատարելագործվում են (տե՛ս *Kopp*, վերևում մեջբերված, § 72, և *Amann*, վերևում մեջբերված, § 56):

125. Վերահսկման գաղտնի միջոցառումների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում Դատարանը մշակել է հետևյալ նվազագույն երաշխիքները, որոնք պետք է սահմանվեն

օրենսդրությամբ՝ լիազորությունների չարաշահումներից խուսափելու նպատակով. հանցագործությունների բնույթը, որոնք կարող են վերահսկման մասին որոշում կայացնելու հիմք հանդիսանալ, մարդկանց այն կատեգորիաների սահմանումը, որոնց հեռախոսները կարող են ենթակա լինել գաղտնալսման, հեռախոսների գաղտնալսման ժամանակահատվածը, այն ընթացակարգը, որին պետք է հետևել ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, օգտագործման և պահպանման համար, կանխարգելիչ միջոցները, որոնք պետք է ձեռնարկել այդ տվյալները այլ կողմերին հաղորդելու դեպքում, և այն հանգամանքները, որոնց դեպքում ձայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն կամ ժապավենները՝ ոչնչացվեն (տե՛ս *Weber and Saravia v. Germany* (որոշում), թիվ 54934/00, § 95, ՄԻԵԿ 2006XII, *Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria*, թիվ 62540/00, § 76, 2007 թվականի հունիսի 28, և *Liberty and Others v. the United Kingdom*, թիվ 58243/00, § 95, 2008 թվականի հուլիսի 1):

126. Ավելին, ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվի պետական մարմինների կողմից 8-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքներին կամայական միջամտության դեմ իրավական պաշտպանության միջոց: Մասնավորապես, այն դեպքում, երբ գործադիր իշխանությունն իրականացնում է գաղտնի գործունեություն, կամայականության վտանգներն ակնհայտ են: Քանի որ հաղորդումների վերահսկման միջոցառումների իրականացումը գործնականում բաց չէ շահագրգիռ անհատների կամ հանրության լայն զանգվածների կողմից ուսումնասիրության համար, ապա իրավունքի գերակայությանը կհակասի, եթե գործադիր իշխանությանը կամ դատավորին շնորհվի անսահմանափակ լիազորությամբ արտահայտվող իրավական հայեցողություն: Հետևաբար, օրենքը պետք է բավարար հստակությամբ նախատեսի իրավասու մարմիններին տրամադրվող ցանկացած նման հայեցողության շրջանակը և դրա իրականացման եղանակը՝ հաշվի առնելով տվյալ միջոցառման օրինական նպատակը՝ անհատին կամայական միջամտության դեմ համապատասխան պաշտպանություն տրամադրելու համար (տե՛ս *Kruslin*, վերևում մեջբերված, § 30, *Amann*, վերևում մեջբերված, § 56, և *Rotaru*, վերևում մեջբերված, §§ 55-56):

127. Հետևաբար, Դատարանը պետք է համոզված լինի, որ լիազորությունների չարաշահման դեմ գոյություն ունեն համարժեք և արդյունավետ երաշխիքներ: Նշվածի գնահատումը պայմանավորված է գործի բոլոր հանգամանքներով, այն է՝ հնարավոր միջոցառումների բնույթը, շրջանակը և տևողությունը, դրանք կարգադրելու համար պահանջվող հիմքերը, դրանք թույլատրելու, իրականացնելու և

վերահսկելու համար իրավասու մարմինները, և ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի տեսակը (տե՛ս *Klass and Others v. Germany*, 1978 թվականի սեպտեմբերի 6, § 50, շարք «Ա», թիվ 28, *Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev*, վերևում մեջքերված, § 77, և *Uzun v. Germany*, 35623/05, § 63, ՄԻԵԿ 2010 (քաղվածքներ)):

128. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ դատարանը նշում է, որ տվյալ ժամանակահատվածում գործող ներպետական օրենսդրությամբ կամայական միջամտության դեմ որոշ երաշխիքներ ապահովված էին: Մասնավորապես, ՔԴՕ-ի 281-րդ և 284-րդ հոդվածներով հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման համար պահանջվում էր դատարանի թույլտվությունը: Ավելին, վերահսկումը կարող էր թույլատրվել միայն հիմքեր պարունակող գրավոր միջնորդության հիման վրա, որը կարող էր ներկայացվել բացառապես կոնկրետ ծառայությունների ղեկավարների կողմից: Միջնորդության մեջ պետք է մանրամասն նշվեին այն տվյալները, որոնք նախատեսվում էր ստանալ, և հսկողության իրականացման ժամկետը, ինչպես նաև միջնորդությանը պետք է կցվեին բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում էին նման միջոցառման իրականացման անհրաժեշտությունը:

129. Չթերագնահատելով վերոհիշյալ երաշխիքների կարևորությունը՝ Դատարանը չի կարող չնկատել տվյալ ժամանակահատվածում հայաստանյան օրենքում առկա լուրջ թերությունները:

130. Մասնավորապես, օրենքով սահմանված չեն եղել ո՛չ իրավախախտումների տեսակները, ո՛չ էլ այն անձանց շրջանակը, որոնց դեպքում կարելի է թույլատրել գաղտնալսումը: Այն նաև չի մանրամասնել այն հանգամանքները կամ հիմքերը, որոնց առկայության պայմաններում կարելի էր նման միջոցառման իրականացման որոշում կայացնել: Այս առումով հարկ է նշել, որ նման մանրամասնությունների բացակայությունը կարող էր հանգեցնել լուրջ հետևանքների՝ հաշվի առնելով այն, որ սույն միջոցառման իրականացման թույլտվություն կարելի էր տալ որևէ քրեական վարույթի բացակայության պայմաններում:

131. Օրենքով նաև նախատեսված չէր գաղտնալսման համար հստակ առավելագույն ժամկետ: Այսպիսով, թեպետ գաղտնալսման իրականացում թույլատրող դատական որոշման գործողության ժամկետը սովորաբար սահմանափակվել է վեց ամսով, այդուհանդերձ, դատավորն ազատ է եղել կայացնելու այլ որոշում :

132. Ավելին, օրենքով նախատեսված չէր միջոցառման իրականացման նկատմամբ պարբերական վերահսկողություն կամ դրա

կիրառման նկատմամբ դատական կամ նմանաբնույթ այլ անկախ հսկողություն, կամ տվյալներն ուսումնասիրելու, օգտագործելու, պահելու և ոչնչացնելու որևէ կանոն: Ոչ էլ պահանջվում էր գաղտնալսումը դադարեցնելուց հետո ծանուցել այն անձին, ում նկատմամբ այն կիրառվել էր՝ այն դեպքերում, երբ նման ծանուցումն այլևս չէր վտանգի գաղտնալսման նպատակը (այս առումով տե՛ս, օրինակ, *Weber and Saravia*, վերևում մեջբերված, § 135, և *Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev*, վերևում մեջբերված, § 90):

133. Վերոհիշյալը բավարար է Դատարանի համար՝ եզրակացնելու, որ միջամտությունը «օրենքին համապատասխան» չի եղել՝ նկատի ունենալով, որ տվյալ ժամանակահատվածում հայաստանյան օրենքը չի պարունակել բավականաչափ հստակ և մանրամասն կանոններ ու չի ապահովել չարաշահման դեմ բավականաչափ երաշխիքներ:

134. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

135. Դիմումատուն նաև բողոքել է, որ նրա նկատմամբ խտրականություն է դրսևորվել իր քաղաքացիության հիմքով, քանի որ դատարանները հիմնավորել են նրա կալանքը այն հանգամանքով, որ ինքը օտարերկրյա քաղաքացի է: Նա մեջբերել է 14-րդ հոդվածը, որը սահմանում է հետևյալը՝

«Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

136. Կառավարությունը հայտնել է, որ ներպետական դատարանները դիմումատուի կալանավորման որոշում կայացնելիս և կալանքի ժամկետը երկարաձգելիս երբևէ հիմք չեն ընդունել այն փաստը, որ դիմումատուն օտարերկրյա քաղաքացի է: Վերաքննիչ դատարանը այդ

հիմքով առաջնորդվել է միայն գրավի դիմաց ազատումը մերժելու մասին որոշում կայացնելիս: Ցանկացած դեպքում, դիմումատուի նկատմամբ չի դրսևորվել խտրական վերաբերմունք, քանի որ նրա հետ նույն գործով մեղադրված անձի նկատմամբ, ով Հայաստանի քաղաքացի է, դրսևորվել է նույն վերաբերմունքը՝ վերցնելով նրան կալանքի տակ: Ավելին, դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա երբեք չի բարձրաձայնել այս հարցը դատարաններում:

137. Դիմումատուն բերել է այն փաստարկը, որ օտարերկրյա քաղաքացի լինելու հիմքով իր կալանավորումը որակվում է որպես խտրականություն՝ 14-րդ հոդվածի խախտմամբ:

2. Դատարանի գնահատականը

138. Դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալու կողմերի բոլոր փաստարկներին հետևյալ պատճառներով:

139. Այն վերահաստատում է, որ խտրականությունը տարբեր վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ՝ առանց որևէ օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորման (տես՝ *Willis v. the United Kingdom*, թիվ 36042/97, § 48, ՄԻԵԿ 2002-IV): Ինչպես արդեն նշվել է վերևում, վերաքննիչ դատարանը հղում է կատարել դիմումատուի՝ օտարերկրյա պետության քաղաքացի լինելու փաստին՝ նրա փախուստի վտանգը հիմնավորելիս: Ճիշտ է՝ դա միակ էական գործոնն է եղել, որը վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել այդ վտանգը գնահատելիս: Այնուամենայնիվ, Դատարանը չի համարում, որ դա կատարվել է խտրական վերաբերմունքի հետևանքով, այլ գտնում է, որ այն եղել է դիմումատուի դրությանն առնչվող էական բոլոր գործոններին չանդրադառնալու արդյունք՝ դրանով իսկ առաջացնելով վատ պատճառաբանված որոշում (տես՝ վերոնշյալ 90-92-րդ պարբերությունները):

140. Հետևաբար, գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է և պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի և 4-րդ կետի:

VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

141. Վերջապես, դիմումատուն ներկայացրել է մի շարք այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով և 10-րդ հոդվածով:

142. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր դատազորության ներքո, Դատարանը գտնվում է, որ դրանցով չի

բացահայտվում Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման որևէ դեպք: Այսպիսով հետևում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի ակնհայտ անհիմն լինելու պատճառով՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի:

VII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

143. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

144. Դիմումատուն պահանջել է 128,400 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

145. Կառավարությունը մերժել է այդ պահանջը:

146. Դատարանը գտնում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս բացահայտված խախտումների հետևանքով և որոշում է այդ վնասի դիմաց նրան փոխհատուցել 6 000 եվրո:

Բ. Ծախսերը և ծախքերը

147. Դիմումատուն պահանջել է նաև 24 800 դրամ դատական ծախսերի և ծախքերի, մասնավորապես փոստային ծառայության ծախսերի համար:

148. Կառավարությունը ներկայացրել է, որ ոչ մի անհրաժեշտություն չկար, որ դիմումատուն օգտվեր FedEx թանկարժեք փոստային ծառայությունից: Նա կարող էր օգտվել Հայկական փոստային ընկերության՝ շատ ավելի էժան ծառայություններից:

149. Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք՝ այնքանով, որքանով ցույց է տրվել, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ, և դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործի շրջանակներում հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը և վերը նշված չափորոշիչները՝ Դատարանը ողջամիտ

է համարում ծախսերի ու ծախքերի դիմաց 55 եվրո գումարի փոխհատուցումը:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

150. Դատարանը պատշաճ է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է, որ գանգատը՝ կապված 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը դիմումատուի կալանավորման ենթադրյալ անօրինականության, նրա երկարատև կալանքի համար պատճառների ենթադրյալ բացակայության, 2007 թվականի փետրվարի 7-ի կալանքի հարցով քննության ընթացքում մրցակցային դատավարություն և կողմերի հավասարություն չապահովելու և դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման հետ ընդունելի է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի և 8-րդ հոդվածի ներքո, մինչդեռ գանգատի մնացած մասն անընդունելի է:

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն առումով, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը դիմումատուին կալանքի տակ պահելու համար իրավական հիմք չի եղել:

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ հաշվի առնելով այն փաստը, որ դիմումատուի երկարատև կալանքի համար վերաբերելի ու բավարար հիմքեր չեն ներկայացվել:

4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում այն առումով, որ 2007 թվականի փետրվարի 7-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայանքի ընդհանուր իրավասության դատարանում վարույթը չի եղել մրցակցային, և չի ապահովվել կողմերի հավասարությունը:

5. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

6. Վճռում է, որ՝

ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, պետք է դիմումատուին վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրը գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 6 000 եվրո (վեց հազար եվրո)՝ գումարած նշված գումարին հաշվարկվող գանձման ենթակա բոլոր հարկերը,

ii) ծախսերի և ծախքերի դիմաց՝ 55 եվրո (հիսունհինգ եվրո)՝ գումարած դիմումատուին վճարվող գանձման ենթակա բոլոր հարկերը,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ պարտավորությունների չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

7. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով, գրավոր կերպով ծանուցվել է 2012 թվականի հոկտեմբերի 2-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ